# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Դիավանտ ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/66 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Sonoscape E2pro | E2pro | Sonoscape Medical Corp. | Շարժական ուլտրաձայնային համակարգ, համալրված առաջադեմ տեխնոլոգիաներով, ինչպիսիք են ամբողջական թվային լայն դիապազոնի ճառագայթի ձևավորումը, բազմալիքային զուգահեռ մշակումը, գունավոր դոպլերը, ուղղորդված էներգետիկ և սպեկտրալ դոպլերը, հյուսվածքային և զտված հարմոնիկ պատկերավորումները, աղմուկի նվազեցման, տարածական համադրման, տրապեցանման պատկերավորումը: Կիրառման ոլորտներ. Ընդհանուր սոնոգրաֆիա, որովայնային, կմախքամկանային և հոդային հետազոտություններ, վահանագեղձ, փոքր մասնիկների և անոթների դուպլեքս հետազոտություններ: Ցուցադրման էկրան. Բարձր թողունակության գունավոր Հեղուկ-բյուրեղային՝ 15,6 դույմ: Էկրանի թեքման անկյունը՝ 0-45 աստիճան, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | թողունակությունը՝ 1024x768: Ներկառուցված մարտկոց 1,5 ժամ առանց հոսանք աշխատանքի համար: Համակարգի քաշը՝ 6,5 կգ, ներառյալ մարտկոցները: Սկանավորման մեթոդներ՝ Էլեկտրոնային կոնվեքս ,Էլեկտրոնային ներխոռոչային միկրոկոնվեքս: Պատկերման ռեժիմներ՝2D (B ռեժիմ), B ռեժիմի ավտոմատ կարգավորում, M-ռեժիմ, իմպուլս ալիքային ռեժիմ PW, գունավոր դոպլեր (CDI), հյուսվածքային և զտված հարմոնիկ ռեժիմ (THI/PHI), Էներգետիկ դոպլեր և ուղղորդված էներգետիկ դոպլեր պատկերավորում (PDI/DPDI), Հյուսվածք-կախյալ պատկերավորում (TSI), տրապեցանման պատկերավորում: Ցուցադրման ռեժիմների համակցում `256 մոխրագույնի մակարդակ, 2B ռեժիմ, 4B ռեժիմ, B + CDI, B + PDI, B + M, B + PW, B + CDI + PW, B + PDI + PW: Հատուկ հնարավորություններ ` Հարմոնիկ պատկերավորում - բոլոր տվիչների հետ ակտիվացման հնարավորություն: Յուրաքանչյուր տվիչի և սկանավորման յուրաքանչյուր ռեժիմի համար երեք ընտրովի հաճախականություններ Անհատական ռեժիմներում պատկերի ստացման ալգորիթմի օպտիմալացման և աղմուկի նվազեցման հնարավորություն Անատոմիական կառուցվածքների հայտնաբերումը բարելավելու համար օպտիմալացման առկայություն Տրապեցանման պատկերավորում բոլոր գծային տվիչների օգնությամբ, կրծքագեղձի, անոթների, կմախքա-մկանային և վահանագեղձի պատկերովորման ռեժիմներում կիրառման համար Տվիչի միաժամանակ միացման համար ակտիվ կոնեկտոր անմիջապես ՈւՁ համակարգի վրա՝ 2: Պատկերի ձևաչափը. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Ամբողջական, բաժանված, բազմակի, ձախ / աջ, վերև / ներքևի պատկերավորում: Ուլտրաձայնի ուժեղացում՝ կարգավորվող Խորությունը՝ 40 սմ: Պատկերի խոշորացում՝ 10 անգամ: Դինամիկ տիրույթը՝ 280 դբ : Հյուսվածքային պատկերավորման օպտիմիզացիայի 4 տեսակ (օրինակ ՝ ճարպ, մկան, հեղուկ, նորմալ) : Ավտոմատ օպտիմալացման առկայություն: Գունավոր դոպլեր ռեժիմում PRF հաճախականություն՝ 0,5-10ԿՀց: Իմպուլս-ալիքային և ուղղորդված իմպուլս-ալիքային ռեժիմներ: Իմպուլս-ալիքային ռեժիմում արագության միջակայք՝ 0–12,3 մ/վ: PRF հաճախականություն՝ 1-16ԿՀց: Դիրքի և ծավալի կարգավորում իմպուլս ալիքային դոպլերի համար՝ 0,5-24 մմ: Անընդհատ-ալիքային դոպլեր ռեժիմում արագության միջակայք՝ 0-42,7 մ / վ: Անընդհատ-ալիքային դոպլեր ռեժիմում PRF հաճախականություն՝ 1-50ԿՀց: Չափումներ և հաշվետվություններ. Բոլոր ստանդարտները B, M և դոպլեր ռեժիմներում: Որովայնի խոռոչ, կրծքագեղձ, գինեկոլոգիա, մանկաբարձական, մանկաբուժական, փոքր մասեր, վահանագեղձ, անոթային, ստանդարտ կենսաչափության հաշվետվություններ և օգտագործողի կողմից ընտրովի հաշվետվություններ, բոլոր հաշվետվությունները ավտոմատ կերպով պահվում են համակարգում: Էլեկտրաէներգիայի սնուցումը ՝220Վ / 50Հց: Տվիչների լրակազմ. Էլեկտրոնային կոնվեքս. Հաճախականությունը՝ 1-ից 7 ՄՀց: Բացվածքը ՝ 50 մմ: Էլեկտրոնային ներխոռոչային միկրոկոնվեքս տվիչ. Հաճախականությունը՝ 3.0-ից 15 ՄՀց : Բացվածքը՝ 11 մմ: Դիտարկման անկյունը՝ 135 աստիճան: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Բազմանգամյա օգտագործման բիոպսիոն ադապտեր ներխոռոչային տվիչի համար: Երաշխիք ՝ 24 ամիս: Համակարգի կարգաբերում և ուսուցում սերտիֆիկացված մասնագետի կողմից: Սարքը նոր է, չօգտագործված: Պարագաներ: Հավաքածուն ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ պարագաները ՝սարքավորման ամբողջական գործարկման համար: Տակդիր. Բարձրությունը 780մմ, լայնությունը 455մմ, խորությունը 610մմ: Տակդիրի բարձրացման երեք մակարդակ 0-100մմ բարձրացման հնարավորությամբ: Առջևի հատվածում բռնակ,փաստաթղթերի զամբյուղ, մալուխների կախիչ: Ստանդարտներ (փաստաթղթային ապացույց (վկայականների պատճեն): • Համապատասխանություն ISO 13485 • Համապատասխանություն MDR (EU 2017/745 directive) |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Диавант в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/66 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | |